ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ
ՀՐԱՄԱՆ

« 11 » օգոստոս 2025թ. No 4894 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 21-Ի N 4543-Ա, 2025 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 06-Ի N 1395-Ա, 2025 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 22-Ի N 2479-Ա ԵՎ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 29-Ի N 4598-Ա ՀՐԱՄԱՆՆԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածները, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության N 01/3765-25 առ 04.08.2025թ. գրությունը.

Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ Ե Մ՝

1.Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի 2024 թվականի օգոստոսի 21-ի «Հայաստանի Հանրապետությունում դեղերի հետգրանցումային փոփոխությունների ընդունման մասին» N 4543-Ա հրամանի հավելվածի 9-րդ տողի 7-րդ սյունակի «Լեկ Ֆարմասյուտիկալս դ.դ., Վերովսկովա փ. 57, 1000, Լյուբլյանա- որակի հսկող (մանրէաբանական), բաց թողնման հսկող, Նովարտիս Ֆարմասյուտիկալ Մանուֆակչըրինգ ՍՊԸ, Վերովսկովա փ. 57, 1000, Լյուբլյանա, Սլովենիա- բալք արտադրող, փաթեթավորող, որակի հսկող (ֆիզիկոքիմիական)» բառերը փոխարինել «Լեկ Ֆարմասյուտիկալս դ.դ., Վերովսկովա փ. 57, 1526, Լյուբլյանա- որակի (մանրէաբանական) և բաց թողնման հսկող, Նովարտիս Ֆարմասյուտիկալ Մանուֆակչըրինգ ՍՊԸ, Վերովսկովա փ. 57,

1000, Լյուբլյանա, Սլովենիա- բալք արտադրող, փաթեթավորող, որակի հսկող (ֆիզիկոքիմիական)» բառերով:

2. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի 2025 թվականի մարտի 06-ի «Հայաստանի Հանրապետությունում դեղերի պետական գրանցման մասին» N 1395-Ա հրամանի հավելվածի՝

1) 4-րդ տողի 5-րդ սյունակի «7,5մգ; I- ներարկիչ Ա՝ 378մգ լուծիչ և Բ ներարկչի մխոց պլաստիկե փաթեթում, II- ներարկիչ Բ՝ 13,1մգ լիոֆիլացված դեղափոշի և ասեղ պլաստիկե փաթեթում» բառերը փոխարինել «7,5մգ; նախապես միացված ներարկիչների համակարգ. ներակիչ Ա՝ 378մգ լուծիչ, ներարկիչ Բ՝ 13,1մգ լիոֆիլացված դեղափոշի և միակցիչ (կանեկտոր) փականի կոճակով, պլաստիկե փաթեթում և ներարկման ասեղ» բառերով,

2) 5-րդ տողի 5-րդ սյունակի «22,5մգ; I- ներարկիչ Ա՝ 490մգ լուծիչ և Բ ներարկչի մխոց պլաստիկե փաթեթում, II- ներարկիչ Բ՝ 32,6մգ լիոֆիլացված դեղափոշի և ասեղ պլաստիկե փաթեթում» բառերը փոխարինել «22,5մգ; նախապես միացված ներարկիչների համակարգ. ներակիչ Ա՝ 490մգ լուծիչ, ներարկիչ Բ՝ 32,6մգ լիոֆիլացված դեղափոշի և միակցիչ (կանեկտոր) փականի կոճակով, պլաստիկե փաթեթում և ներարկման ասեղ» բառերով,

3) 6-րդ տողի 5-րդ սյունակի «45մգ; I- ներարկիչ Ա՝ 436մգ լուծիչ և Բ ներարկչի մխոց պլաստիկե փաթեթում, II- ներարկիչ Բ՝ 63,7մգ լիոֆիլացված դեղափոշի և ասեղ պլաստիկե փաթեթում» բառերը փոխարինել «45մգ; նախապես միացված ներարկիչների համակարգ. ներակիչ Ա՝ 436մգ լուծիչ, ներարկիչ Բ՝ 63,7մգ լիոֆիլացված դեղափոշի և միակցիչ (կանեկտոր) փականի կոճակով, պլաստիկե փաթեթում և ներարկման ասեղ» բառերով:

3.Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի 2025 թվականի ապրիլի 22-ի «Հայաստանի Հանրապետությունում դեղերի վերագրանցման մասին» N 2479-Ա հրամանի հավելվածի 8-րդ տողի 2-րդ սյունակի «Նեուրեքսան» բառը փոխարինել «Նյուռեքսան» բառով:

4.Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի 2025 թվականի հուլիսի 29-ի «Հայաստանի Հանրապետությունում դեղերի հետգրանցումային փոփոխությունների ընդունման մասին » N 4598-Ա հրամանի հավելվածի 10-րդ տողի 5-րդ սյունակի «լուծույթ ներքին ընդունման» բառերը

փոխարինել «կաթիլներ ներքին ընդունման» բառերով, իսկ 6-րդ սյունակի «1,5մգ/մլ; 100մլ ապակե շշիկ և չափիչ գդալ, 200մլ ապակե շշիկ և չափիչ գդալ» բառերը փոխարինել «5մգ/մլ; 20մլ ապակե սրվակ-կաթոցիկ» բառերով:

5. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության քարտուղարության պետ Ա. Առաքելյանին՝ սույն հրամանն ընդունվելու պահից տեղեկացնել ՀՀ ԱՆ «Դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությանը:

6. ՀՀ ԱՆ «Դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Ա.Բաղրյանին՝

1) սույն հրամանը ստանալուց հետո ապահովել լրամշակման կատարումը գրանցամատյանում, ՀՀ առողջապահության նախարարության կողմից հաստատված կարգով, նշելով փոփոխության տիպը և ընդունման ամսաթիվը.

2) սույն հրամանն ուժի մեջ մտնելու պահից հինգ աշխատանքային օրվա ընթացքում ապահովել նշված դեղերի վերաձևակերպված հավաստագրերի տրամադրումը հայտատուներին:

ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ՝ Ա. ՋՈՒՄԱՅԱՆ

Recoverable Signature

X

ԱՐՏԱԿ ՋՈՒՄԱՅԱՆ

Signed by: DZHUMAYAN ARTAK 2801841080